600.0165.16.05.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մայիսի 2018 թվականի №165Ա
քաղ. Երևան

«ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2018 թվականի ապրիլի 11-ի №114Ա որոշմամբ «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է ռադիոհաճախականության օգտագործման №1249 թույլտվությունը,

բ) Ընկերության կողմից «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17.1 հոդվածի 2-րդ կետի պահանջի խախտման՝ ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման համար հաշվարկված 841 500 (ութ հարյուր քառասունմեկ հազար հինգ հարյուր) դրամ գումարի չափով վճարման պարտավորությունը չկատարելու փաստի ուսումնասիրության նպատակով Հանձնաժողովը 2018 թվականի ապրիլի 27-ին վերջինիս նկատմամբ հարուցել է վարչական վարույթ, որի մասին ծանուցել է 2018 թվականի ապրիլի 27-ի №ԱԲ-871Հ գրությամբ,

գ) վարչական վարույթի շրջանակում Ընկերության կողմից ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման համար հաշվարկված 841 500 (ութ հարյուր քառասունմեկ հազար հինգ հարյուր) դրամ գումարի վճարումը փաստացի կատարվել է, և

հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Կարճել Հանձնաժողովի կողմից 2018 թվականի ապրիլի 27-ից Ընկերության նկատմամբ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 17.1 հոդվածի 2-րդ կետի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով հարուցված վարչական վարույթը:
2. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է՝
   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.
   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք.Երևան
16 մայիսի 2018թ.